ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՌԱՏԱՇԵՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
АРАТАШЕН

REPUBLIC OF ARMENIA , ARMAVIR MARZ , VILLAGE HALL OF ARATASHEN

N: 54

«07» 11 2012թ

Արմավիրի մարզ , գ. Առատաշեն

Հեռախոս (0231) 6-23-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի 2012 թվականի նոյեմբերի 5-ին կայացած ավագանու նիստի որոշումները։

Առ դիր 14 թերթ

Համայնքի ղեկավար / Վ.Հարությունյան/

9922-12
07 11 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05.11.2012 թվական　　　　　　　　　　　　　　թիվ 5 նիստ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 13-Ն

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀաստատելԱռատաշեն գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 5 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Ավագանու անդամներ՝

1. Զ.Ինջիղուլյան
2. Ա.Վարդանյան
3. Ն.Վաղարշակյան
4. Գ.Մակարյան
5. Գ.Խաչատրյան
6. Վ.Կիրակոսյան

7. Ռ. Ավագյան

8. Դ. Ամիրյան

9. Ա. Տերտերյան

Համայնքի ղեկավար /Վ. Հարությունյան /

2012 ԹՎԱԿԱՆ 5 Նոյեմբերի

գ. Առատաշեն

Հ ա ս տ ա տ վ ա ծ
05.11.2012 թվականի Առատաշեն
գյուղական համայնքի ավագանու
թիվ 5 նիստի Նո 13-Ն որոշմամբ

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ;

3. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ;

5. ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ;

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

05.11.2012 թվականի — Թիվ 5 նիստի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14-Ն

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության Օրենքի 33-րդ հոդվածի 2-1 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի Փետրվարի 24-ի Ն164-Ն որոշմամբ հաստատված ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ մարմինների կանոնադրության 6-րդ կետով

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է

1. Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված խնամակալության և Հոգաբարձության հանձնաժողովի կազմը;Հանձնաժողովի անհատական կազմից սահմանել նախագահ և քարտուղար համաձայն հավելվածի
:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից :

Ավագանու անդամներ՝ 1. Զ. Ինջիղուլյան
2. Ա. Վարդանյան
3. Ն. Վաղարշակյան
4. Գ. Սակարյան
5. Գ. Խաչատրյան
6. Վ. Կիրակոսյան
7. Ռ. Ավագյան

8. Դ. Ամիրյան

9. Ա. Տերտերյան

Համայնքի ղեկավար՝ /Կ. Հարությունյան/

2012թվականի նոյեմբերի 05

գ. Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
05.11.2012 թվականի
Առատաշեն գյուղական
համայնքի ավագանու թիվ 5
նիստի Նո 14-Ն որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Հարությունյան

Քարտուղար՝ Ն. Տերտերյան

Անդամներ՝
1. Ն. Խաչատրյան
2. Լ. Հունանյան
3. Հ. Մակարյան
4. Լ. Բաղրամյան
5. Գ. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

«05» 11.2012 թվական                                   թիվ 5 ՆԻՍՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15-Ա

## ԼԱՈՒՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ընտանեկան օրենսգրքի հոդվածի 134,135 և քաղաքացիական օրենսգրքի 34,37-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով գործում առկա բոլոր փաստաթղթերը`

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է

1. Ճանաչել Լաուրա Արտավազդի Հարությունյանին Հարություն Սիմիկի Հարությունյանին խնամակալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ`
1. Ջ.Ինջիղուլյան
2. Ա. Վարդանյան
3. Ն. Վաղարշակյան
4. Գ. Սակարյան
5. Գ. Խաչատրյան
6. Վ. Կիրակոսյան
7. Ռ. Ավագյան
8. Դ. Ամիրյան

Գ. Ա. Տերտերյան

Համայնքի ղեկավար՝ / Վ. Հարությունյան /

2012 թվական Նոյեմբերի «05»

Գ. Առատաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

05.11. 2012 թվական                ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16-Ն

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սոցիալական օգնության ֆոնդից հատկացնել դրամական օգնություն համաձայն հավելվածի;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրվանից;

Ավագանու անդամներ՝
1. Զ. Ինջիղուլյան
2. Ա. Վարդանյան
3. Ն. Վաղարշակյան
4. Գ. Սակարյան
5. Գ. Խաչատրյան
6. Վ. Կիրակոսյան
7. Ռ. Ավագյան
8. Դ. Ամիրյան
9. Ա. Տերտերյան

Համայնքի ղեկավար՝ / Վ.Հարությունյան/

2012 թվական 05 նոյեմբերի
Գ.Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
05.11.2012 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ԹԻՎ 16-Ն
ՈՐՈՇՄԱՆ

# Ց ՈՒ Ց Ա Կ

Համայնքի նորածին երեխաների և անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Սահակյան | Արմեն | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 2. | Մակարյան | Մանուկ | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 3. | Հարությունյան | Էդիկ | 60000 /վաթսուն հազար դրամ/ |
| 4. | Նազարյան | Նելլի | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 5. | Ֆահրադյան | Արթուր | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 6. | Սահակյան | Վահագն | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 7. | Ասատրյան | Սուսաննա | 40000 /քառասուն հազար դրամ/ |
| 8. | Քյարամյան | Գայանե | 50000 /հիսուն հազար դրամ/ |
| 9. | Ամիրյան | Արտավազդ | 50000 /հիսուն հազար դրամ/ |
| 10 | Ներսիսյան | Վաչիկ | 50000 /հիսուն հազար դրամ/ |
| 11. | Հակոբյան | Աստղիկ | 50000 /հիսուն հազար դրամ/ |
| 12. | Հակոբյան | Յուրիկ | 50000 /հիսուն հազար դրամ/ |
| 13. | Մնացականյան | Երվանդ | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 14. | Մկրտչյան | Շավարշ | 40000 /քառասուն հազար դրամ/ |
| 15. | Վարդանյան | Սուսաննա | 40000 /քառասուն հազար դրամ/ |
| 16. | Հայրապետյան | Թամարա | 40000 /քառասուն հազար դրամ/ |
| 17. | Միրզախանյան | Համլետ | 50000 /հիսուն հազար դրամ/ |
| 18. | Մնացականյան | Գրիշա | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 19. | Թամրազյան | Գագիկ | 30000 /երեսուն հազար դրամ/ |
| 20. | Արևշատյան | Ռիտա | 40000 /քառասուն հազար դրամ/ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

05.11.2012 ԹՎԱԿԱՆ　　　　　　　　　　թիվ 5 նիստ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17-Ն

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, ,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապե տության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի գյուղական համայնքի վարչական տարածքում 2013 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի;

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

-Ավագանու անդամներ՝

1. Ձ. Ինջիղուլյան
2. Ա. Վարդանյան
3. Ն. Վաղարշակյան
4. Գ. Մակարյան
5. Գ.Խաչատրյան
6. Վ. Կիրակոսյան
7. Ռ. Ավագյան
8. Դ.Ամիրյան

Ա. Տերտերյան

Համայնքի ղեկավար՝ / Վ. Հարությունյան /

2012թվականի Նոյեմբերի ,,05,,

Գ. Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝
Նոր շենքերի, շինությունների/ներառյալ՝ոչ հիմնական/շինարարության/տեղադրման թույլտվության համար տեղակն տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ամառանոցային/տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական շինարարության օբյեկտների համար՝յոթ հազար հինգ հարյուր դրամ/2011թվից.

բա/301-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝7500 դր

բբ/501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բգ/1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000դրամ:

գ/ ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար դրամ

դ/ 20 և ավելի քմ ընդհոնուր մակերես ունեցող օբյեկտների համար տասնհինգ հազար դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շինությունների, շենքերի, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների/բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփողություն, ապա բացի սույն կետ «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ստորգետնյա/շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար երեք հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ,

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաներ/, խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

բ/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ

գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝ երկու հարյուր հազար դրամ.

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ:

բ/ թունդ ալկոհոլային/սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ;

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ հազար դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հարյուր դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսու/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տաս հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

12. Համայնքի սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալություն տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փախհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել մեկ հազար դրամ: